# ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

# Ձևավորող գնահատումը...

Արժանահավատ տվյալներ փնտրելու և մեկնաբանելու  գործընթաց է, որոնք սովորողն ու ուսուցիչը օգտագործում են, որպեսզի պարզեն, թե որտեղ են գտնվում իրենք  ուսումնառության գործընթացում, որ ուղղությամբ  և ինչպես է պետք շարժվել լավագույն արդյունքի հասնելու համար:

(Black և Wiliam, 2009)

# Ձևավորող գնահատման շնորհիվ...

սովորողը տեղեկանում է իր առաջադիմության ընթացքի ու որակի մասին իսկ ուսուցիչը՝ ինչն է սովորողը յուրացրել, ինչպիսի դժվարություններ ունի, և ինչը պետք է վերանայի ուսուցման գործընթացում:

# Ձևավորող գնահատումը ամփոփիչ գնահատում չէ

Ամփոփիչ գնահատումն օգտագործվում է սովորողի առաջադիմությունը կանոնավոր կերպով գրանցելու համար: Այն անցկացվում է ուսումնական տարբեր փուլերի ավարտին:

# Ձևավորող գնահատումը…

չի օգտագործվում աշակերտին գնահատականներ կամ նիշեր տալու համար:

7/10

B+

57%

«ստուգված»

# Ձևավորող գնահատման քայլաշարը



# Հետադարձ կապ

Տրված հարցի պատասխանը լսելով՝ դեռ ամեն ինչ չի վերջանում, այլ պատասխանին անպայման պետք է հետևի հետադարձ կապը (արձագանք):

# «Փակ» հարցեր

Սովորողների գիտելիքները ստուգելու համար ավանդաբար կիրառվել և կիրառվում են «փակ» հարցեր:

Օրինակ՝

- Անվանե՛ք 2 ոչ մետաղական էլեմենտ:
- Ի՞նչ է անհրաժեշտ բույսին ֆոտոսինթեզ իրականացնելու համար:
- Ե՞րբ է Հայաստանն ընդունել քրիստոնեությունը:
- Անվանե՛ք Հայաստանին սահմանակից երեք երկիր:

# «Բաց» հարցեր

- «Բաց»-ը գերադասելի է «փակ»-ից:
- «Բավական ջանք է պետք ներդնել լավ հարց ձևակերպելու համար. հարցը պետք է նպաստի սովորողի մտածողության զարգացմանը»:

**(Black, 2003)**

# «Փակ» և «բաց» հարցեր. օրինակ՝

- «Ե՞րբ է թագավորել Տիգրան Մեծը Հայաստանում»:
- «Ինչու՞ են Տիգրան Մեծին համարում հայ թագավորներից ամենանշանավորը»:

# Ի՞նչ պետք է անել...

- **Ուղղորդող աջակցություն** տրամադրել դպրոցներին և ուսուցիչներին։
- Ապահովել նրանց **նյութերի նմուշօրինակներով** (օր.՝ ՁԳ գործիքներ, համապատասխան առաջադրանքներ)։
- Ապահովել հիմնական նյութի վերաբերյալ **հայտորոշիչ թեստերով**։
- **Վերապատրաստել** ուսուցիչներին ՁԳ-ն զարգացնելու և օգտագործելու համար։
- Ապահովել կապը շահառուների **հետ՝ պատշաճ ներկայացնելով ՁԳ**։

# Արդյունավե՞տ է արդյոք ձևավորող գնահատումը...

ԱՅՈ.

- **ՁԳ - ն հանգեցնում է ուսուցման և ուսումնառության նշանակալի բարելավման:**
- ՁԳ-ն բարելավում է նաև միավորային գնահատման արդյունքները:
- **Այդ բարելավումն ավելի շոշափելի է ցածր ունակություններով սովորողների համար:**